(1723 թ. հունիսի 4) դեպի Թբիլիսի արշավող օսմանյան զորաբանակի հրամանատար, էրզրումի Իբրահիմ փաշայի շտաբին առընթեր, Շարի՝ի ատյանում կազմված արձանագրությունը, ըստ որի Զըլգրրի էյալեթի Օրուջայա կոչվող բանակատեղում փաշային են ներկայացել Կայղուլիի մահալի (ՀՍՍՀ Ամասիայի և Ղուկասյանի շրջաններ) 31 գյուղերի հայ բյադխուդաները և պարտավորվել նույն թվականից սկսած, երեք տարի շարունակ ստորին չափով ջիզյա (գլխահարկ) վճարել օսմանյան իշխանություններին, որից հետո արդեն պիտի վճարեն ընդունված կարգով, այսինքն երեք՝ ստորին, միջին և բարձր սակերով։ Բացի դրանից հիշյալ գյուղերի հայ համայնքներին պարտադրվել է հողային հարկի (խարաջ-ի մուվազզաֆա) և օրինական տուրքերի (ռուսում-ի կանունիյյա) պարբերական հատուցումը, որից հետո միայն նրանց «աման» է շնորհվել, այսինքն կանխվել է այդ շրջանի ասպատակումը, կողոպուտն ու գերեվարությունը դեպի Թբիլիսի արշավող զորքերի կողմից[7]։

Շարիաթական այս արձանագրությանը կամ մահզարին առընթեր պահպանված են նաև Իբրահիմ փաշայի՝ այս կապակցությամբ արքունիքին ներկայացրած զեկուցագիրն ու սուլթանական դիվանից ստացված արտոնագիր-հրովարտակը (բերաթ)։ Վավերագրերի շարադրման եղանակից և բովանդակության ընդհանուր տրամադրությունից պարզ երևում է, որ Անդրկովկասի նվաճման նպատակով արշավանքի ելած օսմանյան զինվորականության գերագույն հրամանատարությունը, սկզբնապես վարելով մեղմ քաղաքականություն, դիվանագիտորեն ձգտում էր առերևույթ զիջողական վերաբերմունքով կանխել բնակչության հավանական դիմադրության փորձերն ու խռովությունները։ Նույն ժամանակների այլ վավերագրերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի որոշակիորեն խոսելու հրամանատարության վարած այդ օրինակ քաղաքականության մասին։

Ինչպես տեսանք, Կայղուլիի հայ համայնքների հետ համաձայնությունը կայացել է օսմանյան զորքերի հարձակման հենց առաջին օրերին (1723 թ. հունիս), որով և կանխվել է դիմադրությունն ու ուղի հարթվել դեպի Թբիլիսի զորքերի անարգել առաջխաղացման համար։ Իսկ ահա, 1725 թ. դեկտեմբերին, երբ արդեն գրավված էին Թբիլիսիի և Երևանի բերդերը և օսմանյան հրամանատարությունը պատրաստվում էր վճռական գործողությունների անցնել՝ ճնշելու համար Սղնախների ու Ղափանի զինվորված հայության դիմադրությունը, Արքունի դիվանին ուղղված պաշտոնական զեկուցագրով Երևանի դեֆթերդարը հայտնում է այն մասին, որ «Երևանի ենթակա վայրերից Զարուզբիլի նահիան (ՀՍՍՀ Վարդենիսի շրջան), նախապես սանջաքի իրավունքով տրված է եղել Օմար փաշային։ Սակայն, երբ Աստծու կամքով պատուհասի ենթարկվեց, ռայաթները սարսափի ներքո միացան Սղնախի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդվելու ցանկություն ունեցան, սակայն, քանի որ նրանց խրտչումն ու կատաղությունը դեռ չի անցել, առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն ու ռեսմը (տասանորդ ու տուրք) անտես առնել և բավարարվել միայն ջիզյայի գանձումով»[8]։

Պատմական կարևոր այս փաստաթուղթը, որ վերաբերում է Գեղարքունյաց երկրի հարավարևելյան շրջաններին, մեծ արժեք է ներկայացնում նաև XVIII դարի առաջին կեսի հայ ազատագրական կռիվների ծավալման ու աշխարհագրական սահմաններին վերաբերող հարցերի լուսաբանման տեսակետից։

Պարզ է, որ 1725 թ. վերջերին, երբ Արցախում ու Սյունիքում կռիվները դեռ շարունակվում էին, հսկայական զոհեր խլելով և ծանր կորուստներ պատճառելով նվաճողներին, կիսով չափ հնազանդեցված շրջաններում օսմանյան հրամանատարությունը հանդես էր գալիս խաբուսիկ, մեղմ հարկային քաղաքականությամբ։ Նպատակ ունենալով այդ ձևով ստիպանաբար համոզել մարանդող զանգվածներին՝ վերջ տալու դիմադրությանն ու ապավինելու նվաճողների ողորմածությանը։

Կարծում ենք, որ բոլորովին էլ պատահական չէ Արարատյան երկրի կենտրոնական գավառների և Երևանի վերաբերյալ այս կարգի փաստաթղթերի բացակայությունը։ Դեռևս 1960 թ. Մատենադարանի «Բանբերի» 5-րդ հատորում հրապարակված Վաղարշապատի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակներից պարզ երևում է, որ Երևանի էյալեթի մանրամասն աշխարհագիրը կատարվել է Երևանի գրավումից հետո միայն, որը տեղի է ունեցել 1724 թ. հունիսին[9]։

---

7 Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի արխիվ (այսուհետև ԿՄԺԳԱ), ֆոնդ ДАК, վավ. 198/14։

8 Նույն տեղում, վավ. 268։

9 Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները.—«Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 437։